գստեան երկնային երանուէտ կենաց։ Այլ այս մի ինչ է՝ որ վրդովէ զսիրտս մեր, որպէս յուսամք թէ և զձեր իսկ նախադէտ միտդ, և այն է փոփոխութիւն իրաց աշխարհիս։ Է երբեմն՝ զի 'ի փոփոխիլ կառավարչաց՝ փոփոխին և կառավարութիւնքն, և ըստ ամենայնի 'ի հակառակ կոյս շրջին, է երբեմն, զի որ բազում հոգաբարձութեամբ ժողովեալ գանձեցաւ, շռայլութեամբ վատնին յումպէտս և յանօգուտս 'ի ձեռն անխոհեմ կառավարչաց, է երբեմն, զի յասպատամբութենէ եւ 'ի վրդովմանէ երկրին, յաւար մատնին, որպէս եղեւ Տարոնոյ Ս. Ուխտին քանի ամաք յառաջ։ Ուստի երկնչիմք, թէ 'ի պատահիլ այսպիսեաց, այսքան մեծաջան աշխատութեան ձեր արդիւնք և մթերք զկնի ձեր գուցէ այսպիսեաց ինչ դիպեսցին, և դարձեալ Ս. Տունդ հանդերձ միաբանութեամբ տառապեսցի 'ի կարօտութեան և ընդ պարտեօք հեծեսցէ։ Այլ քանզի մեք՝ որ ամենայնիւ խորհիմք և կամիմք զօգուտն Ս. Աթոռոյդ և զանդորրութիւն միաբանութեան եթէ 'ի ներկայիս եւ եթէ յապագայն, ընդ Կիրակոս Եպիսկոպոսի հարազատի Ս. Աթոռոյդ յաղագս ապահովութեան գումարեալ արդեանց՝ այսպէս խորհեցաք։ Զի զայն՝ զոր տեսաք 'ի հաշուէդրի, և այն՝ որ յետ այնմ յայս երկուս ամս յաւելաւ, և որ զկնի այսորիկ ամ յամէ յաւելցի, զմեծ մասն այնց արդեանց, որով եղանակաւ և դիւրին իցէ՝ յայս կոյս փոխադրեսցես, եւ զայն առ այն ոք հասուսջիք՝ զոր կամիք և ընտրէք յայս պէտս և եթ վերակացու, և մերով երիցս դիտութեամբ փակեալ եւ կնքեալ արկեղք զետեղեսցի 'ի ներքին Քարուկիր Գանձատան Մայր եկեղեցւոյս։ Եւ որ ինչ հոգ և փոյթ իցէ անկորուստ մնալոյ այնր դրամոց, կամ շահեցուցանելոյ՝ զամենայնն խորհրդակցութեամբ ընդ վերակացուին առ 'ի ձէնջ կարդելոյ յանձն առու եմք կատարել յօգուտ Ս. Աթոռոյդ և յանմահ յիշատակ սրբութեան ձերում։ Իբր զի կամ շահաբեր քարուկիր կալուած պատահէ ստանալ աստ կամ Իզմիւռին, կամ հին դրամ դանձեսցին, գնեսցին անդամանդեայ ակունք, որք միշտ յաճումն գնոյ և դրամոց բնաւորեալ են։

Ի տնտեսութիւն այսր ամենայնի հարկաւոր է աստ ոք 'ի պատուաւոր հարազատ միաբանաց Ս. Տանդ, վասն որոյ